



Մ Ա Մ Լ Ո Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաք Երևան
փետրվարի 19, 2015

Եվրամիությունն աջակցում է Հայաստանին ինտեգրվել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին

Փետրվարի 19-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը հրավիրում է լրագրողներին մասնակցելու Հայաստանի բուհերի պրոֆեսորադասախոսական և ադմինիստրատիվ կազմի համար փետրվարի 17-19-ը Երևանում կազմակերպվող եռօրյա ուսուցողական դասընթացի տեղեկատվական միջոցառմանը: Հանդիպումը տեղի կունենա ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 2րդ հարկում գտնվող Շուբերտի անվան N 202 լսարան, ժամը 10:00-ին:

ԵՄ երեք փորձագետների մասնակցությամբ դասընթացի թեման է ուսումնառության վերջնարդյունքների կազմումը, ուսանողների գիտելիքի, հմտությունների և կարողությունների մակարդակի գնահատումը, մասնավորապես այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են ֆորմալ և ոչ ֆորմալ քննությունները, մասնակցությունը դասին, առաջադրանքների կատարումը, ինքնագնահատումը, գնահատումը համակուրսեցիների կողմից և այլն, ինչպես նաև կրթական մոդուլներում Կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգի (ԿԿՓԵՀ) կիրառումը: Դասընթացին կմասնակցի շուրջ 30 մասնագետ Երևանի 12 համալսարաններից:

Առաջիկա ամիսներին վերոնշյալ խորագրով դասընթացներ կանցկացվեն ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի այլ մարզերում. նախատեսվում է բուհերի պրոֆեսորադասախոսական և ադմինիստրատիվ աշխատակազմերի ուսումնառության վերջնարդյունքներով զբաղվող ավելի քան 90 ներկայացուցչի մասնակցություն: Այս դասընթացները Բոլոնիայի սկզբունքներին համահունչ ՀՀ նոր օրենսդրության մշակման գործընթացի մի մասն են:

ԵՄ աջակցությամբ հոկտեմբերի 1-ից մեկնարկել է «Հայաստանի բարձրագույն կրթության զարգացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» ԹՎինինգ ծրագիրը: Ծրագրի համընդհանուր նպատակն է ապահովել ՀՀ և Եվրոպայի բարձրագույն կրթության համատեղելիությունը և հնարավորություն ապահովել, որպեսզի ուսանողները, աշխատողներն ու շրջանավարտներն օգտվեն շարժունության, որակավորումների միջազգային ճանաչման և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի այլ երկրների բուհերի հետ համագործակցության ընդլայնված հնարավորություններից: Ծրագրում ընդգրկված են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը: Ծրագրում ներգրավված են շուրջ 60 միջազգային փորձագետներ Ֆինլանդիայից, Գերմանիայից և Էստոնիայից:

Այս փուլում ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում հիմնական մարտահրավերը այնպիսի ամբողջական համակարգի ստեղծումն է, որը հնարավորություն կտա պատրաստելու բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ովքեր կունենան փոխանցելի հմտություններ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, բյուջեն 1 մլն եվրո է, տևողությունը՝ 24 ամիս:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.

«Փարլիսիս հեպտա» ընկերության մեղիա բաժնի պատասխանատու Լուսինե Սաֆարյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 53 74 41, բջջ.՝ (055) 00 37 27



DAAD

Deutscher Akademischer Austausch Dienst
German Academic Exchange Service



Ծրագիրն իրականացնում է Հայաստանի կրթության և գիտության նախարարությունը Ֆինլանդիայի կրթության գնահատման կենտրոնի և Գերմանիայի կրթության ու հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ:

Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Հայաստանում ԵՄ պատվիրակություն

Հեռ: +374 10 54 64 94
Ֆաքս: +374 10 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: